

ԱԷՆՍՔԵՐ




«ԹԱՆՏՈՒՆԻ ՄԱՆՔԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՅՈՒՆ ԴԱՆ» : ԴՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Դ .

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ . ԴԵԿՏԵՄԲԵՐ 1 . 1875 .

ԹԻԻ 12



ԴՅԳՈՂ ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐԸ

Մանր աղոց համար պատկեր մը կայ հոս: Դժգոհ գործաւորներն, ուրնք բոլոր օրն աշխատած են, բարկացած են թէ ժիւս երկու մարդիկը քիչ մը ժամանակ միայն աշխատելով իրենց չափ վարձք կ'ընդունին: Ասոնք իրենց առած վեց դահեկանը ետ բերելով, ինչպէս անոնց դէմքէն կ'երե-

ւի, զիրենք գործի տանող անձին կ'ըսեն որ, եթէ իրենց աւելի վարձք տալ չուզեր, տուածն ալ ետ առնէ: Բայց այն մարդն այս դժգոհներուն կ'ըսէ. «Ո՛չ ապաքէն դուք ինձ հետ վեց դահեկանի սակարկութիւն ըրիք: ահա ձեր աւուրչէքն, առէք զայն և դացէք:»

Ես կը կարծեմ որ դուք ուրիշ ան-

գամ ասոր նման պատմութիւն մ'ալ կարդացած էք, սակայն եթէ կարդացած չէք, ձեր Աստուածաշունչին մէջ Մատթէոսի Ի. գլուխը բացէք և կարդացէք: Հոն պիտի կարդաք այն ամէն խօսքերը զոր Յիսուս մեր Տէրն բաւ իր աշակերտաց, երբ Պետրոս կ'ուզէր գիտնալ թէ ինչ վարձք պիտի առնեն այն ամէն բանին համար զոր անոնք ըրին:

Տղայք ասկէ սա դասը կրնան սորվիլ, թէ իրենց վրայ շատ մեծ համարում ունենալու չեն: Յովհաննէս իրեն համար բտելու չէ թէ, «Ես Յովակիմէն աւելի աղէկ տղայ մ'եմ:» և Մարիամ էր մօրն բտելու չէ թէ, «Ես չլացի, Լուսիա լացաւ, և դարձեալ Լուսիային իմ ինձորէս աւելի մեծ խնձոր մը տուիք:» Անոնք որ զիրենք ուրիշներէն լաւ կը բռնեն՝ ընդհանրապէս ցաւով և ամօթով կը տեսնեն թէ որչափ սխալ են իրենց այն կարծիքն:

ՍԻՍԼ ՆՇԱՆՆԵՐ

Գիշեր ատեն շողենաւով Կ. պոլիս եկողը կը տեսնէ ծովուն եզերքը լապտերներ նաւավարաց լոյս տալու համար: Այս տեսակ լապտերներ գրեթէ ամէն ծովեզերք կը գտնուին, և նաւավարք անոնց նայելով կրնան անվտանգ մտնել նաւահանգիստը: Բայց կան նաև մարդիկ, որ այսպիսի լապտերներով կը ջանան ոչ թէ նաւավարաց օգնելու, այլ զանոնք կողոպտելու: Այս տեսակ ձարդիկ ծովեզերքը լապտերներ կը դնեն նաւապետները խաբելու համար. նաւապետներն այն սխալ նշաններէն խաբուելով վտանգաւոր տեղ կը քնն նաւը որ կ'ընկղզին: Այս լապտերները խաբելու համար դրուած նշաններ են: Չեղի

Գ. Կ. 122

ցուցնեմ ուրիշ սխալ նշաններ որոնք զմարդիկ ի կորուստ էր տանին :

Սխալ նշան են զբոսատեղիք ուր օդի և ուրիշ օգեկից ըմպելիք կը ծախուին : Ասոնց հաճելի երևոյթէն մարդիկ խարտեւով կը կործանին, և գինեպաններն անոնց ստակոյլը կը հարստանան : Թատրոնն ալ սխալ նշան է . անգլուստ և զուարճալի տեղ մը կը թուի, բայց անոր զուարճալի տեսարանները յաճախ սկիզբ են չար խորհրդոց որոնք զմարդ ի կորուստ կը տանին : Առուտուրի մէջ մարդ խաբելն ալ սխալ նշան է . կը թուի թէ մարդ այսպէս ընելով կը շահի և կը հարստանայ, բայց այդ ալ զմարդ կը կործանէ այն սխալ նշանին պէս որ ցամաքը մօտ կարծեցնելով նաւուն խորտակուելուն պատճառ կ'ըլլայ : Ով որ ուրիշին սուտ խօսելը գոյնալ, հայհոյել, կիրակին աւրել և կամ ուրիշ չարիք մը գործելու պատճառ կ'ըլլայ՝ սխալ նշան կը ցուցնէ, որ զմարդ յաւիտենական կորուստը կը տանի : Ուրեմն դուք ձեզի առաջնորդ առէք Աստուածաշունչը, որ միակ լոյս է ձեր շաւղաց և որով պիտի սորվիք ճշմարիտ ու սխալ նշաններն իրարմէ որոշել, և կենաց բոլոր վտանգներէն անգլուստ անցնիլ : Աստուածաշունչն է այն ճշմարիտ լոյսը որ Յիսուսի հետեւելու և երկիրքը, յաւիտենականութեան ապահով նաւահանգիստը, հասնելու ճամբան կը ցուցնէ :

Տղայոց Աւետարանի համար .

ԱՄԵՆԷՆ ԱՂԷԿ ԲԱՆԵՐԸ ՏՈՒԷՔ ԹԱԳԱՌՈՒՆ

Երկու մարդիկ, որ թագաւորը տեսնելու կ'երթային, իրարու ըսին. «Անոր ի՞նչ ընծայ տանելու ենք?» Մին ըսաւ. «Ես տունը ձի մ'ունիմ որ ծեր, կաղ, և այլ ևս գործելու անկարող է, կրնամ այս ձին ընծայ տալ» : Իսկ միւսն ըսաւ. «Քեզեցիկ և առոյգ ձի մ'ունիմ, կ'ուզեմ զայն ընծայ տալ» :

Թագաւորն այս ընծաներէն ո՞րն աւելի պիտի հաւնի : Անտարակոյս պիտի ըսէք թէ վերջինը :

Յիսուս մեծ թագաւոր է . և մենք պարտինք բերկրանօք տալ անոր, ինչ որ ունինք լաւագոյն : Դուք ամէնրդ ալ կը խորհիք թէ ժամանակաւ պիտի ապաշաւէք և դարձի պիտի գաք, բայց երբ, եթէ սպասէք մինչև որ

ձերանօք, ձեր մարմինները սատանային ծառայելով մաշեցնուէն ետքն Աստուծոյ բերած պիտի ըլլաք : Աստուած կ'ուզէ որ դուք անոր նախընթաց զձեզ երբ զօրաւոր և առոյգ էք, որպէս զի կարենաք անոր համար գործել :

«Ես կ'եմ» պիտի ապաշաւեմ, ու մանկութիւնս Քրիստոսի պիտի նուիրեմ» ըսէք :



ԵՐԿԻՐ ՄԸ ԿՐՈՎԻ ՄԷՁ

Ամարան արեգակէն շորցած խոտի բռնկիլը երբէք տեսած էք, Անմիջապէս որ բոց մը կ'արծարծի, խոտը վառօդի պէս կը սկսի բռնկիլ, և եթէ հով կայ, կրակը շատ արագ կը տարածուի ամէն կողմ : Կան երկիրներ ուր ընդարձակ խոտաւէտ դաշտեր կը գտնուին, և երբ որեւիցէ պատճառով մը մէկ կողմէն խոտը վառել սկսի, հովը սաստիկ զօրութեամբ կրակը այն երկրին ամէն կողմը կը տարածէ, եւ այնչափ արագ կը տարածէ, որ ամենէն երազոտն ձիւնն իսկ հաղիւ կրնան փախչելով ազատիլ :

Այս պատկերն այն տեսակ հրդեհ մը կը ցուցնէ : Բոցերն հովին արագութեամբ կը ճարակին երկրին բոլոր կողմերն, և կը տեսնէք որ կենդանիք ամենայն զօրութեամբ կը փախչին իրենց կենանքն ազատելու համար : Չիաւոր մարդիկ, եղջերուք, գայլեր, վայրենի գոմէշներ, ամէնքն ալ կը փախչին բոցերուն ճարակ չըլլալու

համար, և գոմէշներէն ոմանք այնչափ զարհուրած են, որ գահալէժներու վրայէն կը ցատկեն, և կրակէն ազատուելու համար ժայռերու վրայ նետուելով կտոր կտոր կ'ըլլան :

ԱՄԵՆԷՆ ՄԵՍ ՊԱՏԻԸ

Պարոն Պղերդ այնչափ հպարտ էր որ աշխատիլ չէր ուզեր : Միշտ սովոր էր բարեկամներէն խնդրել որ օգնեն իր պարաքը վճարելու հացագործին : Ստէպ կ'երթար իրեն ծանօթ մեծատանց քով, և կ'ըսէր անոնց. «Ձեզի եկայ գիտնալով որ բարերար էք ամենուն, ուստի ձեզ կը մնայ ընել ինչ որ կը վայել» : Պարոն Պղերդ այսպէս ընելով միշտ նեղութեան մէջ էր և երբէք գոհ և հանգարտ չէր : Օր մը երբ շատ նեղուած էր, քանզի գործել չէր ուզեր, օտարական մը անոր ըսաւ. «Կերպարանքդ կը տեսնուի որ գործդ յաջող չէ . ձախորդութեան հանդիպեցար . դէմքդ հոգ և արամութիւն ունեցողի դէմք է» : «Գործիս մէջ յաջող չեմ» ըսաւ պարոն Պղերդ, «քանզի գործ չունիմ, և գործ չունենալը մարդ հարուստ չընէր : Եթէ պարապ պտտած ժամանակս կիսոյն չափ ալ գործէի, փոխանակ այսպէս գատարկաչրջիկ ըլլալու հարուստ եղած կ'ըլլայի» : Յետոյ սկսաւ պատմել թէ ինչպէս ծոյլ մեծցած էր և որչափ կ'աւեր աշխատութիւնը, և թէ ինչպէս հայրը զուր ջանացած էր զայն գործելու վարժեցնել, թէ ինչպէս ծուլութեան պատճառաւ թշուառութիւններ եկած էին գլուխը : «Բայց», յաւել ըսել պը. Պղերդ, «կրնի ամենէն մեծ պատիժ այսպիսի մարդ մը ըլլալս է» :

Տղայք, նմանոյ մի ըլլաք պարոն Պղերդի . լաւ է իբրեւ պարզ գործաւոր աշխատելով ցամաք հաց ուտել, քան թէ քաւալու ուտել մուրացկանութեամբ :

Ը Օ ԳՐԶ ԷՑ ՄԸ

Ի Էջերը հլու և հեղ անասուններ են, և ամէն տեսակ գէշ վարմանց կը համբերեն : Երբ կը տեսնենք որ Պարսիկ իշապարները իրենց առխտակով, ապրով կամ կը վնասուրով ծանրաբեռնած էջերը կը ծեծեն հայհոյելով, և դեռ անոնք հանգարտութեամբ իրենց բեռերը կը տանին, մեզ այնպէս կը թուի թէ, էջերն այսպէս հլու և հանգարտ ստեղծուած են, ուրիշ կերպ չեն կրնար ըլլալ : Բայց այն էջը որոյ վրայով այժմ ես ձեզ պիտի խօսիմ, միշտ այնպէս հլու չէր, շատ

քով էլ մ'էր այն, և պէտք եղած առան կուռիլ ալ գիտէր:

2. Իրիկուն մը երբ այս էջն իր գործը լինցուց, ահաբ զայն հրապարակին վրայ լծող տուաւ, որ երկթայ քիչ մը կանանչ խոտ ուտէ. վասն զի խեղճ էջը բոլոր օրն Օննիկ աղային նոր շինել տուած տան համար գերաններ կրած էր, և առաւօտէն ի վեր բան մ'ուտելու առան դատած չէր: Մակայն այն երեկոյնին ահաւոր բան մը պատահեցաւ: Մարդ մ'այն հրապարակին մօտ վրանի մը մէջ առիւծ մը դրած և մարդ գլուխ մէկ գահեկանի ի տես հանած էր: Այն երեկոյնին առիւծն իր գառագիղը կտարելով զարհուրելի մահաշնամբ մը դուրս ցատկեց: Ամէն մարդ վախէն պոռպոլով փախաւ. առիւծը բաց ի հաճի Հասանի էջն, որ ինչպէս ըսի հրապարակին վրայ կ'արած էր, ուրիշ մէկը չգտաւ որ անոր վրայ յարձակի: Առիւծն ուժգին կերպով մը էջն վրայ նետուեցաւ և իր ճիրաններով աղէկ մը բռնեց զայն, սակայն էջը վարպետութեամբ առիւծն իր վայէն նետեց: Երբ առիւծն ուրիշ առիւծի մեծ յարձակում մ'ըրաւ անոր վրայ, էջն արդէն պատրաստուած էր անոր դէմ դնելու, և առիւծին դիտուն այնպէս սաստիկ կից զարկաւ, որ գնդակի մը պէս զլորեցաւ, կրկին և կրկին առիւծն էջն վրայ յարձակեցաւ, բայց էջն իր զօրաւոր ուղեբերով ամէն անգամ ալ զայն յերկիր տապալեց: Վերջապէս առիւծը կից ուտելէ վախնալով ձգեց գնաց: Բայց չէ՛ այն էջն որ առիւծի մը հետ կուռելով անոր կը յաղթէ: Բայց յաճախ անասունք և մարդիկ իսկ որոնք անգիտա ու հեղ կ'երեւին, երբ ժամանակը գայ, քաջ ըլլալ գիտեն:

Տղայոց Աւետարանի համար

ՄԱՐԿԱՍԻ ԴԱՐՁ

Կիրակնօրեայ դպրոցի մը գաստատուներէն մէկն հարցուց Մարիամին. «Այսօր համարդ որն է?»
Մարիամ ըսաւ թէ համարս այս է. «Յիսուս Քրիստոսը նոյն է երէկ ու այսօր, և... և...»
«Մամուէլ, Մարիամին ըսածը շիտակ է,» հարցուց գաստատուն փոքր տղա մը, որ միշտ, «Չեմ գիտեր,» կ'ըսէր:
«Մամուէլ ժպտելով, «Չեմ գիտեր,» ըսաւ. «Կը ցաւիմ որ չես գիտեր,» ըսաւ գաստատուն, և հարցուց, «Ո՞վ գիտէ թէ Մարիամ ուղիղ կամ սխալ ըսաւ իր համարը?»
Սև աչուի փոքրիկ աղջիկ մը դէպ յառաջ ծռելով յառած կընայէր գաստատուն երեսն ի վեր: Դասատուն, «Ինչ է Հուսթ, դուն ըսէ» ըսաւ: Եւ

աղջիկն ըսաւ. «Յիսուս Քրիստոսը նոյն է երէկ ու այսօր, և յաւիտեանս:»

«Այս, այնպէս է, դուն շիտակ ըսիր, Հուսթ: Բայց Մարիամ, գնե՛ք թէ, տարիներ առաջ երբ այս համարը գրուեցաւ, այն օրը և օր մ'առաջ նաև հետեւեալ օրն Յիսուս սիրող Փրկիչ էր, և անկէ ի վեր փոխուեցաւ, ու այժմ սիրելի չէ, այլ անգուժ և աննորոզ մէկը...» Մարիամ խռովելով ըսաւ. «Ոչ, ան չկրնար երբէք անգուժ մէկն ըլլալ:» «Ոչ, ան երբէք չկրնար անգուժ ըլլալ,» կրկնեց վարժապետը, «և ահա ասոր համար Սուրբ գիրք կ'ըսէ. «Յիսուս Քրիստոսը նոյն է երէկ ու այսօր, և յաւիտեանս»: Նա միշտ կը սիրէ, այն ատեն իսկ երբ մեր սիրան անկէ պաշտած է, նա միշտ յօժար և պատրաստ է մեզ օգնել, այն ատեն իսկ երբ մենք անոր անհնազանդ կը գրտնուինք:»



ԱՄԵՆԷՆ ԱՂԷԿ ՃԱՄԱՐՆ

1. Մօֆիկ առաւօտ մը շատ դժգոհ էր երբ արթնեցաւ. մէկը մեղադրել կ'ուզէր իր զեք գիտեր թէ զով մեղադրէր: Անոր կ'երեւէր թէ փոքր հաստը ամէն բան ձախող կ'երթար: Երբ արթնելով թափեց, հացը ձեռքէն փոշի մէջ ինկաւ, և երբ հաւերուն կեր տարու համար դուրս ելաւ, ջուրի մէջ կոխեց և սուրբ թրջեցաւ:
2. Երբ սենեակը դարձաւ, տեսաւ որ իր մետաքսի կոխիկը, փոքրիկ քոյրը, Եսթեր, կատուին ձագէ կը խաղցընէր: Մօֆիկ միտքէն ըսաւ, «Ի՞մ բաներուս հետ խաղա՞նք անոր պիտի սորվեցնեմք: Բայց փոքր Եսթերին պիտի զարնէր, միտքը խորհուրդ մը կ'ըսէ: Յիսուսի փոքր տղոց վրայ անպարտեցած սէրն ինչեց: Այս խորհուրդն կարծես աղագարարութիւն մ'էր անոր, ուստի մէկէն միտքը փոխելով կամայ կամայ Եսթերին կախի

գնաց, և յանկարծ իր ձեռքերը փաթեկ աղկան աչքերուն վրայ դնելով (զանից համարուեց):
3. «Ինչ է այն, Մօֆիկ» ըսաւ Եսթերը, «ես ներս եկայ և որ այս գեղեցիկ խնձորը քու կողովիդ մէջ դնելով զքեզ զարմանքի բերեմ, և ահա դուն զիս զարմանքի կը բերես այնպիսի ատեն մը գալով, երբ ես չեի խորհեր:» Եսթերը այսպէս խօսելով Մօֆիկին ցուցուց այն գեղեցիկ և կարմրուկ խնձորը զոր ինք բերած էր:
4. Մօֆիկ փոխանակ Եսթերը ծեծելու զայն համարած ըլլալուն համար շատ ուրախացաւ: Ինչ եղած էին անոր գառան զգացումները: Ամէնքն ալ անհետացած էին Մօֆիկին սրտէն, երբ նա խորհեցաւ մեր Տէր Յիսուսին վրայ, և քանի մը համարյոք տուտ իր քրոյր

Տղայոց Աւետարանի համար. Ա Ա ԵՐԿՐԱՇԱՐԺ ԾԹԹ

1. Չենէ քանիներն ահա զողով լցուած են երկրաշարժներու ատեն, և կուզեն գիտնալ թէ ինչպէս առանց պատճառները:
2. Երկիրը գնդակի պէս կըր և մէջը պարապ է, բայց այն պարապ մասը կրակով կամ հողած մետաղներով լեցուն է: Այս հալած զանգուածին տրամագիծը գրեթէ ութ հազար մղոն է, կամ ժամու հաշուով երկու հազար ութ հարիւր ժամ է:
3. Երկրիս այս պարապ գնդակին մէջ շոգիներ կը գործառնեն, և հարկաւ դուրս պիտի ելլին: Դուք ամենքդ կարծեմ թէ տեսած էք ամին խուփիչ ինչպէս վեր փայլերը անոս մէջ ջուրը կ'եռայ: Զգրէն ելած շոգին այս կերպով խոյս կուտայ: Միշտ այսպէս երկրիս մէջ գտնուած շոգիներն անդին ասօրին կ'երթան մինչև որ հրաբուխի բերան մը գտնելով դուրս ելլեն, կամ օդային ծակ մը չկրնանք բաց անել, ժայռերը կը խորտակեն և իրենց համբայ կը բանան, և այսպէս կը պատճառեն այն յնցումները զորս մենք երկրաշարժ կամ գետնաշարժ կը կոչենք: Այս օր կրնայ ըսել թէ երբ երկրաշարժ պիտի պատահի, կամ երկրաշարժը որչափ սաստիկ պիտի ըլլայ: Սակայն ասիկա գիտցէք որ պատերազմ, սով, ժամատախ կամ ուրիշ երկրային աղէտներ բնաւ վարպետութիւն չունին երկրաշարժներու հետ:
4. Երկրաշարժի ատեն ոչ վերոյիշեալ բաներէն վախնայե՛ք ենք, այլ փրկուանք զորոք անհաշիւ և փրկատակաց տակ մնացող մարդոց մահուանէն:

Handwritten marginal notes on the right side of the page, including numbers 1, 2, 3, 4, 5 and some illegible text.

ՔԱՆԻ ՄԸ ՀԻՆ ԳՐԲԵՐ

Շատ զարմանալի հին գրքեր կան, որոց թերթերն այժմուս մեր գրքերուն թերթերուն պէս իրարու կապուած չեն, և ոչ իսկ թուղթ են: Այս տարօրինակ հին գրքերուն թերթերն աղիւսէ են, և անոնց վրայ գտնուած գիրքերն ոչ թանսքով գրուած, և ոչ ալ տպուած են, այլ կաւէ աղիւսներու վրայ գրուուած են: Բառերը ալ ոչ Հայերէն են, ոչ Թուրքերէն, ոչ Յունարէն, ոչ Անգլիարէն, ոչ ալ սրիցէ արդի լեզուէ մը: Այս բառերը հարիւրաւոր տարիներ առաջ Նինուէի մէջ բնակող ժողովրդեան մը լեզուն բառերն են, և վերը յիշուած աղիւսէ գրուածներն ալ այն ժողովրդեան թագաւորին գրաստան արձանագրութիւններն են:



Այս պատկերին մէջ յիշեալ աղիւսեայ գրուածներուն մէկ կտորը կը տեսնէք: Քանի մը գիտուններ այս գրուածոց լեզուն կարգալու գաղտնիքը գտան, և անոնց մէջ կարգացին այլևայլ պատմութիւններ որոնցմէ ոմանք ջրհեղեղին վրայ են: Նինուէն Լնտոն բերուած շատ մը այս տեսակ զարմանալի հնութեանց մէջ ջրհեղեղի պատմութիւնը գտնող գիտունը հասկըցաւ որ այն պատմութեան մէկ մասը պարունակող աղիւսեայ քանի թերթեր Նինուէի մէջ մնացած էին, ուստի Լնտոնէն ելաւ, մինչև Մուսուլ գնաց, և հոն հետը քանի մը գործաւորներ առնելով, Նինուէի աւերակներուն մէջ փորեց այն տեղը ուր միւս կտորները գտնուած էին, և այսպէս գտաւ պահանները, նաև ուրիշ այնպիսի գրուածներ, որ կը խօսին աշխարհիս արարչագործութեանը, և Ադամայ և Եւայի մեղաց վրայ: Ատոնք գրուներն են հեթանոս պատմագիրք, որոնք Նինուէի մէջ կ'ապրէին այն ատեն երբ իսրայէլի սրգիք եգիպտոսէն ելան:

Տղայոց Աւետարեի համար.

ՍՈՒՐԲ ԳԻՐԲ ԿՍՐԿԱՅՈՂ ՓՈՒՔԻ ՏՂՈՅ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ



ԹՏ ամպեր մթաղնած էին զերկինք, աստուիլեք օրէ ի վեր ոչ արեւ և ոչ աստղեր կ'երեւէին: Անյոյս նաւ մը զայրագին ալեաց վրայ կը ծփար, և հովիւ ու ջուրը զայն գէպ ի ժայռերը կը մղէին: Նաւուն մէջ եղած

բեռերն և ուրիշ բաները ջուրը նետուած էին, և ահաբեկ նաւորդները ստիկմամբ պաշարուած կրնային ոչ ուտել և ոչ ըմպել: Կատաղի հովը սասակութեամբ առաջ քշեց նաւն, որ ալիքներէն կոծուելով կտոր կտոր եղաւ: Նաւորդներն և նաւաստիք տախտակի կտորներու կամ խորտակուած կայմերուն փաթթուելով, կամ լողալու ջանալով ալիքներէն դէպ ի ցամաք տարուեցան, և ամէնքն ալ ողջամբ դուրս ելան: Այն ցամաքն կղզի մ'էր, ուր կը բնակէին բարբառոս մարդիկ, որոնք մարդասիրութեամբ ընդունեցան խեղճ նաւաբեկեալները: Հեղեղի պէս անձրի կը տեղար, երբ նաւաբեկեալք ցամաք ելան, բարբարոսներն անոնց բնակարան տուին և կրակ վառեցին որ այն թշուառները տաքնան: Ծովէն ազատողներուն մէջէն մարդ մը երբ խուլ ժողոված կը բերէր որ կրակին վրայ դնէ, այն խուլէն թունաւոր օձ մ'ելաւ, և անոր ձեռքը բռնեց: Հոն սպասող բարբարոսներն երբ օձը տեսան, պոռալով ըսին. «Անշուշտ ասիկա մարդասպան մըն է, որ թէպէս ծովէն ազատեցաւ, բայց իրաւունքը թող չտուաւ որ տարի»: Բայց նա, որոյ ձեռքէն բռնած էր օձը, փոխանակ մեռած իյնալու, ինչպէս անոնք կը սպասէին, գաղանը կրակին մէջ թօթուեց և անփառ մնաց:

Այս մարդը ձմեռն այն կղզւոյն մէջ անցուց, և երբ անկէ կը մեկնէր, բնակիչներէն շատերը մինչև նաւը զանի յուղարկեցին, մեծ պատիւ ըրին անոր և շատ ընծայ տուին:

Այս մարդն ո՞վ էր, ո՞ւր կ'երթար, և ի՞նչպէս կը կուտէր այն կղզին, ուր ելան նաւաբեկութենէ ետքը:

ԹԻՒ 9 Ա. Ի. Ե. ՏԱՔԵՐԻ ՄԷՋ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՀԱՆՆԵՂՈՒԿԻՆ ՊԱՏՄՈՒԹՆԸ

Այս հանելուկին 16 պատասխան ընդունեցինք, զորս յանձնեցինք պատմաբան Կատարեանի և պատմաբան Գարրիէլեանի որ Հայերէն և Թուրքերէն լեզուաւ ամենէն աղէկ գրուած պատասխանը գտան, որ պէտքի մենք ալ մրցանակն ըստ այնմ տանք:

Մեր վերոյիշեալ բարեկամներն գիտար գտան որոշել թէ որ պատասխանին շարագրութիւնն ամենէն աղէկն է, վասն զի կային մէկ քանիներ որ աղէկ էին մրցանակ առնելու համար, բայց բաւական խորհելով այն պատասխաններուն մէջէն Ոթոն Մ. ձիւլաճեանին գրած Հայերէն պատասխանը և Եսթեր Սարգիսեանին ալ Թուրքերէն պատասխանը զատեցին իբրև ամենէն աղէկ: Ուստի մենք ալ 1876ի ազալոյց Աւետարեքը ձրի պիտի ղրկենք այն տղոց:

Մեր յունուարի թուոյն մէջ ուրիշ հանելուկ մ'ալ պիտի հրատարակենք, անոնք որ այս անգամ չյաջողեցան թող ջանան երկրորդ մրցանակն առնել:

Մեծ Տէր,

Ձեր սեպտ. 1 թուով Աւետարեքին մէջ Աստուածաշունչէն առնուած պատմութեան մը հանելուկը կար. որոյ պատասխանն, եթէ չեմ սխալիր, հետեւեալն է.

«Անհայր և անմայր» ան արձանն է, որ Դաւիթին տեղ գրուեցաւ, և Սաւուղ թագաւորին այլիկն ալ անոր համար անկողին մը պատրաստած էր:

«Թէև պալատի մը մէջ էր,» բայց մարդոց ձեռքով շինուած տուն մը չէր կրնար տեսնել: Քարեղէն մարդ մը (արձան մը) համր է, բայց իբր Դաւիթ, Սաւուղ թագաւորը խաբեց: Թէև Դաւիթին տեղ այս արձանն զինուորաց ձեռքն ինկաւ ու անօդնական էր, բայց անոնք չկրցան զայն սպաննել: Ուստի այս արձանը Դաւիթ թագաւորը մահուանէ ազատեց խաբելով զՍաւուղ, բայց և այնպէս ոչ ոք վարձատրեց զայն:

Բնաւ մէկն անոր անունը չգիտեր, բայց մենք որ Սուրբ դիրք կը կարդանք իր վրայովը լսած ենք:

Ա. Դատ. ԺԹ. 13—18.

ՈՐՈՑ Մ. ՃԻՒԱՅԵԱՆ

Իւսկիւտար սեպտ. 13, 1873

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր ձ. Բ. ԿԻՆՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Չագմագըլար, Յակոբեան խան, Թիւ 12.